

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի
Հանրապետության կառավարության միջև կապի հարցերով
համագործակցելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի
Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,
ձգտելով զարգացնել երկկողմ շահավետ հարաբերությունները
կապի ասպարեզում, ապահովել երկու պետություններում էլեկտրական և
փոստային կապի անխափան գործունեությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, գործելով սեփական իրավասությունների և
հնարավորությունների սամաններում, համաձայն իրենց օրենսդրության
պահանջների՝ փոխշահավետ և համահավասար պայմաններում
կշարունակեն և կընդլայնեն համագործակցությունը արբանյակային
կապի ասպարեզում:

Հոդված 2

Կողմերը կկառուցեն իրենց հարաբերությունները կապի
ասպարեզում՝ համաձայն միջազգային համընդհանուր կանոնների և
սկզբունքների՝ համաշխարհային կանոնադրության հիման վրա: Այն
հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն Համաձայնագրով, ինչպես նաև
միջազգային համաձայնագրերով, որոնց անդամ են համարվում երկու
Կողմերն էլ կամ Կողմերից որևէ մեկը, կլուծվեն փոխադարձ
համաձայնությամբ՝ Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությանը
համապատասխան:

Հոդված 3

Կողմերը ճանաչում են երկու պետությունների ցանցերի
առկայությունը, որոնք զարգանում են այդ ցանցերի զարգացման
գլխավոր պլանի համաձայն, և, եթե հարկ լինի, տեղեկացնում են միմյանց
իրենց ցանցերի հետագա զարգացման մասին:

Կողմերը իրականացնում են ռադիոհաճախականության սպեկտրի
համակարգումը Կողմերի միջև՝ հետագայում հզոր
ռադիոհեռուստատեսային կայանների կառուցման դեպքում փոխադարձ
խանգարումները բացառելու նպատակով:

Հոդված 4

Կողմերը էլեկտրական և փոստային ծառայություններ հատկացնելու համար փոխհաշվարկները վարում են ազգային փոխհաշվարկային կենտրոնների միջոցով: Էլեկտրական և փոստային կապի կազմակերպման բոլոր փոփոխությունների մասին, ինչպես նաև՝ կապի ծառայությունների փոխադարձ հաշվարկների, Կողմերը նախօրոք կհայտնեն միմյանց 3 ամիս առաջ, մինչև ենթադրվելիք փոփոխությունների ժամկետը:

Կողմերը երաշխավորում են բոլոր տեսակի փոստային առաքումների և հատուկ կապի, էլեկտրակապի ցանցով հաղորդումների, հեռուստատեսային և ռադիոհաղորդումների ծրագրերի տարանցումը և հաշվարկում են համաձայն ընդունված գների:

Հոդված 5

Կողմերը պահպանում են դրամական փոխադրումների առաջացման ուղղությամբ ծառայությունների ցուցաբերումը՝ իրականացնելով փոխադրումների գործառնությունների միջպետական հաշվարկները և օգտագործելով մեկ դրամական միավոր (ռուբլի):

Պետություններից մեկի կողմից սեփական ազգային դրամ մտցնելու դեպքում դրական փոխադրումների առաքումը կկանոնակարգվի առանձին համաձայնագրով:

Հոդված 6

Կողմերը միմյանց հանդեպ չեն կիրառի (Կողմերի կապի վարչակազմերի գործունեությանը արգելք հանդիսացող կամ դժվարացնող խտրականության միջոցներ) երրորդ երկրներում և միջազգային կազմակերպություններում:

Հոդված 7

Կողմերը միմյանց ցուցաբերում են աջակցություն հեռուստատեսային ծրագրերի տարածումը կազմակերպելու և Կողմերի կառավարությունների կամ նրանց համապատասխան գերատեսչությունների համաձայնագրերով սահմանված կարգով գրանցված՝ մի Կողմի պարբերական հրատարակումների բաժանորդագրման և մանրածախ առևտրի գործը մյուս Կողմի տարածքում:

Հոդված 8

Կողմերը պայմանավորվում են ցուցաբերել կապի ծառայություններ սեփական պետություններում մյուս Կողմի քաղաքացիներին՝ կրելով պատասխանատվություն ժամանակին և որակյալ սպասարկման համար՝ համաձայն իրենց պետությունների օրենսդրության:

Հոդված 9

Կողմերը համաձայնեցին համագործակցել կապի միջազգային նախագծերի իրագործմանը: Ֆինանսավորման և բաժնեմասի մասնակցության հարցերը կկարգավորեն հատուկ համաձայնագրով:

Հոդված 10

Կողմերը փոխշահավետ և համահավասար պայմաններով կազմակերպում և իրականացնում են՝

- էլեկտրական և փոստային կապի միջոցների ասպարեզում գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորական համատեղ աշխատանքներ,

- էլեկտրակապի միջպետական ցանցերի շահագործումն ու օպերատիվ-տեխնիկական ղեկավարումը՝ համաձայնեցված ալգորիթմով և նորմատիվ ակտերով.

- փոխհամագործակցություն տեխնիկական շահագործման հարցերում, էլեկտրակապին և փոստին ցուցաբերվող ծառայությունների որակի բարձրացում, նշված հարցերում փորձի և տեղեկության փոխանակում:

Հոդված 11

Կողմերը արտակարգ իրավիճակներում կապի ցանցերով և միջոցներով ցուցաբերում են փոխադարձ աջակցություն առաջնային հաղորդագրությունների հաղորդմանը:

Հոդված 12

Կողմերը խորհրդակցությունների և բանակցությունների ճանապարհով կլուծեն վիճելի հարցերը, որոնք կարող են առաջանալ սույն Պայմանագրի մեկնաբանման և իրականացման ընթացքում:

Սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորությունները կատարելիս առաջացած տարաձայնությունները կդիտվեն և կուսումնասիրվեն հատուկ ստեղծված ժամանակավոր միջկառավարական հանձնաժողովի կողմից, որը բաղկացած կլինի Կողմերի հավասար քանակ ունեցող անդամներից:

Հոդված 13

Կողմերը որոշեցին ծառայողական տեղեկությունների փոխանակման համար օգտագործել ռուսաց լեզուն:

Փոստային առաքումների հասցեները և հեռագրերը Կողմերի միջև ձևակերպվում են ռուսերենով:

Հոդված 14

Սույն Համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարվում են Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և ուժի մեջ են մտնում Պայմանավորվող կողմերի ստորագրումից հետո:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և կմնա ուժի մեջ 90 օր՝ այն օրից, երբ Կողմերից մեկը մյուս Կողմին գրավոր կհաղորդի սույն Համաձայնագրի գործողության դադարեցման վերաբերյալ իր մտադրությունների մասին :

Կատարված է Երևան քաղաքում 1993 թվականի մայիսի 19-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և վրացերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասար են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի մայիսի 19-ից: